1000 խոշոր հարկատուների կողմից 2023թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2023թ. 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է ավելի քան 1,7 տրլն դրամ, ինչը 15%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1): Հարկ է արձանագրել, որ 2022-ին, դրան նախորդող տարվա համեմատությամբ, աճը շատ ավելի նշանակալի էր՝ շուրջ 32%: Մյուս կողմից, 2023թ. ցուցանիշի աճը առաջանցիկ է՝ տնտեսական ակտիվության ակտիվության անվանական աճի մակարդակի համեմատությամբ:



Գծապատկեր 1. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2023թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, որոշակի փոփոխություններ են արձանագրվել նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության պարագայում: Այսպես, 2023թ.100 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 976 մլրդ դրամ, ինչը շուրջ 100 մլրդ դրամով կամ 11 տոկոսով բարձր է նախորդ տարվա համեմատությամբ: 10 խոշորագույնների պարագայում աճը շատ ավելի համեստ է՝ ընդամենը 4 մլրդ դրամի չափով կամ 1% (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2022-ի համեմատությամբ մոտ 24% ավելացում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2023թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 34,4 մլրդ դրամ՝ 2022-ի 27,8 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2023թ. համար կազմել է 28 անգամ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ էականորեն ցածր

է: Ընդ որում, 2023-ի մակարդակը նվազագույնն է՝ դիտարկվող ժամանակահատվածի համար: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2023-ին 114 անգամ է, ինչը ևս զգալիորեն ցածր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը: Դիտարկվող ժամանակահատվածի սկզբում, օրինակ, այդ հարաբերակցությունը կազմել է 181 անգամ (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2023թ. արդյունքներով ՀՀ-ում գործող 311 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: Նախորդ տարի դրանց թիվը 258 էր, 2021-ին՝ 201: Նույն կերպ, 2023-ի հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով, ցանկում ներառված հարկատուների մեծ մասը՝ 654 հարկատու, վճարել է 500 մլն դրամը գերազանցող ընդհանուր գումարով հարկեր: Նախորդ տարվա համեմատությամբ այդպիսի հարկատուների թիվը ավելացել է 111-ով:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

2023թ. արդյունքներով, ինչպես և նախորդ տարում, խոշոր հարկատուների ցանկում ներառված չէ որևէ հարկատու, որի վճարած հարկերի ընդհանուր մեծությունը չի գերազանցում 200 մլն դրամը, մինչդեռ 2021-ին ցանկում ներառվել էր 142 այդպիսի սուբյեկտ, իսկ, օրինակ, 2020թ.դրանց թիվն էլ ավելի մեծ էր՝ շուրջ 200 (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2023թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին պետք էր վճարել շուրջ 324 մլրդ դրամի հարկ, այն դեպքում, երբ 2022-ին ցանկում ներառվելու համար պետք էր վճարել 261 մլն դրամի հարկ, իսկ 2021-ին կամ 2020-ին՝ բավարար կլիներ 157 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը:

2023-ի հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 200 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 160 էր, իսկ օրինակ 2020-ին՝ 116: Նույն կերպ, 304 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվաքանակը ավելացել է 24-ով (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի ավելացումը՝ նախորդ տարվա համեմատ, սակայն դիտարկվող ժամանակահատվածի առավելագույն մակարդակի համեմատությամբ ցուցանիշը դեռևս ցածր մակարդակի վրա է: 2023թ. 1000 հարկատուների վճարած հարկերի

ընդհանուր մեծության 32,3%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 28,7% էր (գծապատկեր 7):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 31,5%-ը ուղղակի հարկերն են, ինչը չնայած նախորդ տարվա համեմատությամբ բարձր է ավելի քան 5 տոկոսային կետով, սակայն՝ ցածր է նախորդ մի քանի տարիների մակարդակից:



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2023թ. 12 ամիսների արդյունքներով, 102 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 1 մլրդ դրամը: Նախորդ տարի այդպիսի հարկատուների թիվը 81 էր, իսկ 2021-ին՝ 61:

2023թ. 200 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 470 սուբյեկտներ, 2022-ին հանրապետությունում գործել է 409 այդպիսի հարկատու (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2023թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական հարկատուի՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ցանկի առաջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը

	2018	2019	2020	2021	2022	2023
Ընդամենը, մլրդ դրամ	5.8	6.4	5.9	6.7	8.8	9.8
Շահութահարկ, մլն դրամ	1054	1080	805	711	1100	1591
Եկամտային հարկ, մլն դրամ	892	1037	990	1090	1163	1480
ԱԱՀ, մլրդ դրամ	2.4	2.58	2.4	2.7	3.4	4.0
Ակցիզային հարկ, մլն դրամ	800	980	970	820	970	1177

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023-ի արդյունքներով վճարել է 9,8 մլրդ դրամի հարկ (2022-ին՝ 8,8 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,6 մլրդ դրամ (2022-ին՝ 1,1 մլրդ դրամ), եկամտային հարկը՝ 1,48 մլրդ դրամ (2022-ին՝ մոտ 1,2

մլրդ դրամ), ԱԱՀ-ն՝ 4,0 մլրդ դրամ (2022-ին՝ 3,4 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 1,2 մլրդ դրամ (2022-ին՝ 0,97 մլրդ դրամ):

Աղյուսակ 2. Ցանկի վերջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը, մլն դրամներով

	2018	2019	2020	2021	2022	2023
Ընդամենը	148.0	177.0	166.0	171.0	278.0	344
Շահութահարկ	19	22	20	22	-20	40.5
Եկամտային հարկ	41	47	52	56	78	79.4
ԱԱՀ	70	84	80	68	123	154
Ակցիզային հհարկ	6	4.4	4.8	7.3	3.6	2.5

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023թ. 12 ամիսների արդյունքներով վճարել է 344 մլն դրամի հարկ (2022-ին՝ 278 մլն դրամ), եկամտային հարկը՝ 79 մլն դրամ (2022-ին՝ 78 մլն դրամ), շահութահարկը՝ 40 մլն դրամ (նախորդ տարի՝ միջինում արձանագրվել է 20 մլն դրամի վնաս), ԱԱՀ-ն՝ 154 մլն դրամ (2022-ին՝ 123 մլն դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի կերպով փոխվել է նաև ցանկում ներառված հարկատուների տարածքային բաշխվածությունը: Այսպես, Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 80%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ էապես չի փոխվել: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2023-ին կազմել է 82,1%, ինչը նկատելիորեն բարձր է նախորդ տարվա մակարդակից (գծապատկեր 9):



Գծապատկեր 9.Երևանի մասնաբաժինը, տոկոսներով

Աղյուսակ 3-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք կազմակերպությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2022-2023թթ. ընթացքում: Ընտրված թվով 100 կազմակերպությունների 70 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: Այսպես, նախորդ տարվա համեմատությամբ բացարձակ արտահայտությամբ առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում առաջատար են «ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»-ը՝ +28,5 մլրդ դրամ; «ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ»-ը՝ +25,7 մլրդ դրամ; «ՓՐԻԹԻ ՈՒԵՅ»-ը՝ + 24,8 մլրդ դրամ: Նույն տասնյակում ներկայացված են 4 բանկեր՝ Արդշինբանկ, Ամերիաբանկ, Էվոկաբանկ, ԱԿԲԱ բանկ, որոնց գումարային հարկային վճարումները 2023-ին կազմել են շուրջ 72 մլրդ դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ 47 մլրդ դրամով ավելի:

Ընդհանրապես, ցանկի առաջին հարյուրյակում ներկայացված են ՀՀ 18 բանկերից 14-ը, որոնց գումարային հարկային վճարումները գերազանցել են 126 մլրդ դրամը, ինչը նախորդ տարվա համեմատ ավելի է շուրջ 70 մլրդ դրամով:

Առաջին հարյուրյակի ընկերություններից 54-ը նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումները ավելացրել են առնվազն 1 մլրդ դրամով, իսկ 21 հարկատուի պարագայում արձանագրվել է վճարած հարկերի առնվազն կրկնապատկում:

Ցանկի առաջին հարյուրյակի 11 ընկերություններ նախորդ տարվա համեմատությամ ավելի քան 1 մլրդ դրամով կրճատել են վճարած հարկերի ծավալը: Անկում արձանագրած հարկատուների շարքում առանձնանում են հատկապես ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ-ն՝ նվազումը 73 մլրդ դրամի չափով, ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ-ն՝ -16,1 մլրդ դրամ, ԹԵՂՈՒՏ-ը՝ -8 մլրդ դրամ:

Աղյուսակ 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2022	2023	Աճը, %	Տարբերությունը, մլրդ դրամ
1	ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	143.9	70.9	-51	-73.0
2	ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ	45	55.3	23	10.3
3	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ	52	48.6	-7	-3.4
4	ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ	17.6	46.1	162	28.5
5	ՓՐԻԹԻ ՈՒԵՅ	8.5	33.3	292	24.8
6	ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ	0.8	26.5	3212	25.7
7	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	8.2	25.7	214	17.5
8	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	7.3	24.9	241	17.6
9	ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ	17	23.7	39	6.7
10	ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ	17	22.7	34	5.7
11	ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ	18	22.5	25	4.5
12	ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ	27.4	22.3	-19	-5.1
13	ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ	15.9	15.8	-1	-0.1
14	ՖԼԵՇ	15.9	15.6	-2	-0.3
15	ՍԻԹԻ	11.1	15.1	36	4.0
16	ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	11.3	14.0	24	2.7
17	ԱԿԲԱ ԲԱՆԿ	7.4	13.2	79	5.8
18	ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ	13.7	13.0	-5	-0.7
19	ՅՈՒՔՈՄ	7.9	12.4	57	4.5
20	ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ	10.8	12.1	12	1.3
21	ՄԱՔՍ ՕԻԼ	12	11.5	-4	-0.5
22	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ	12.9	10.2	-21	-2.7
23	ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ	6	10.0	67	4.0
24	ԻՆԵԿՈԲԱՆԿ	5.2	9.9	90	4.7
25	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ	8.8	9.3	6	0.5
26	ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ	8.8	9.1	4	0.3
27	ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ	8	9.0	12	1.0
28	ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ	8.4	8.7	3	0.3
29	ԷՎՈԿԱԲԱՆԿ	1.5	8.0	434	6.5
30	ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ	7	7.9	13	0.9
31	ԿԱԲԱՐԿՈ	7.3	7.8	7	0.5
32	ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ	6	7.8	30	1.8
33	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	3.9	7.7	98	3.8
34	ՆԵՎԻՍ	0.9	7.7	759	6.8
35	ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ	5.3	7.4	39	2.1
36	ՎԻԷՄ ԱՐՄԵՆԻԱ	2.6	7.2	176	4.6
37	ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ	5.6	7.1	26	1.5
38	ԴԻՋԻԹԵՅՆ	5.6	7.0	25	1.4
39	ՕՆԻՐԱ ՔԼԱԲ	7.6	6.8	-10	-0.8
40	ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ	4.9	6.8	38	1.9
41	ԱՆԴԱԿՈ	5.1	6.7	32	1.6
42	ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ	5.3	6.5	23	1.2
43	ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	5.6	6.5	16	0.9

44	ԱՍԿԵ ԳՐՈՒՊ	6.7	6.5	-4	-0.2
45	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ	4.7	6.5	37	1.8
46	Այդի Բանկ	2.6	6.3	142	3.7
47	ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ	4	6.3	56	2.3
48	ՆՈՐ ԶՈՎՔ	1.6	6.2	286	4.6
49	ԲԱՐՍԻՍ	5.5	6.1	11	0.6
50	ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ	5.9	6.1	3	0.2
51	ԲԱՂՐԱՄՅԱՆ	7.1	5.9	-17	-1.2
52	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	2.5	5.8	132	3.3
53	ՍԱՍ-ԳՐՈՒՊ	5.3	5.6	6	0.3
54	ԱՎՏՈԲԱՅ	2.7	5.6	107	2.9
55	ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ	2.2	5.4	145	3.2
56	ԹԵԼ-ՍԵԼ	4.4	5.3	22	0.9
57	ՍՊԱ ՍԻԳԱՐՈՆ	3.3	5.3	60	2.0
58	ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ	4.4	5.3	20	0.9
59	ԱԹԵՆՔ	3.9	5.1	32	1.2
60	ԱԴԱՄԻՈՒՄ	4.6	5.1	12	0.5
61	ՍԼԱՎ ԳՐՈՒՊ	4.6	5.1	11	0.5
62	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ ՏՐԱՆՍԳԱԶ	5.4	5.1	-6	-0.3
63	ԴԵՐԺԱՎԱ-Ս	3.9	4.9	24	1.0
64	ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ	5.8	4.8	-16	-1.0
65	ԷՊԱՄ ՍԻՍԹԵՄԶ	3.6	4.8	32	1.2
66	ԱԳ ԻՄՊԵՔՍ	4.1	4.7	15	0.6
67	ՏԵԽ ՍԵՐՎԻՍԵՍ		4.7	#DIV/0!	4.7
68	ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵԶՈՒՐ	4.8	4.6	-4	-0.2
69	ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ	3.8	4.6	20	0.8
70	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	3.3	4.6	38	1.3
71	ՍՊԱՅԿԱ	4.6	4.4	-4	-0.2
72	ԱՎԵՐՍ	6.1	4.3	-29	-1.8
73	ԿԵՀ ԱՐՄԵՆԻԱ	0.3	4.3	1348	4.0
74	ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ	5.5	4.3	-21	-1.2
75	ԹԵՂՈՒՏ	12.3	4.3	-65	-8.0
76	ՅՈՒՆԻԲԱՆԿ	2.6	4.1	57	1.5
77	ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ	3.2	4.0	26	0.8
78	ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ	4.4	4.0	-9	-0.4
79	ԱՐԿԱԹ	2.9	3.9	36	1.0
80	ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ	1.4	3.9	181	2.5
81	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	3.5	3.9	12	0.4
82	ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ	3.9	3.9	-1	0.0
83	ՊԻԿՍԱՐՏ	4.1	3.7	-9	-0.4
84	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	19.6	3.5	-82	-16.1
85	ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ	4.9	3.5	-28	-1.4
86	ՖՈՐՎԱՐԴ	2.1	3.5	67	1.4
87	ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ	4	3.4	-14	-0.6
88	ԱՐՄԲՐՈԿ	0.8	3.4	326	2.6

89	ՇԻՆՎԵԿՏՈՐ	1.4	3.4	141	2.0
90	ՅՈՒԷՍԷՅ ԱՎՏՈԷՔՍՊՈՐՏ ԲՍԵ	0.6	3.3	457	2.7
91	ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ	6	3.3	-45	-2.7
92	ԴԻ-ԴԻ-ԹՐԵՅԴ	3	3.3	10	0.3
93	ՖԱՍԹ ԲԱՆԿ	1.3	3.2	147	1.9
94	Ա.Ա.Բ.ՊՐՈԵԿՏ	1.8	3.2	78	1.4
95	ԷՖՖԵԿՏ ԳՐՈՒՊ	1.6	3.2	100	1.6
96	ԱՐՊԱՆԻՎ	3.6	3.2	-11	-0.4
97	ՔԱՌՄԱՌԿ	2	3.2	59	1.2
98	ՁԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ	1.7	3.2	87	1.5
99	ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ	3.4	3.2	-7	-0.2
100	ԷԼՔՈՐ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ	3.7	3.2	-15	-0.5

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2023թ. հունվար-դեկտեմբերի արդյունքներով, նախորդ տարվա համեմատությամբ ծավալային և կառուցվածքային ուշագրավ փոփոխություններ է արձանագրել.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 1,7 տրլն դրամ, ինչը 15%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: 2022-ին, դրան նախորդող տարվա համեմատությամբ, աճը շատ ավելի նշանակալի էր՝ շուրջ 32%:
- ✓ 2023թ. ցուցանիշի աճը առաջանցիկ է՝ տնտեսական ակտիվության անվանական աճի մակարդակի համեմատությամբ, ինչպես նաև գնաճի 2% ցուցանիշի պարագայում,
- ✓ ցանկում հայտնվել է 237 նոր խաղացող ինչը որոշակիորեն խոսում է գործարար միջավայրի բարելավման մասին, քանի որ չի նկատվում "լճացում",
- ✓ շուրջ 100 մլրդ դրամով կամ 11 տոկոսով ավելացել է հարկային վճարումների ընդհանուր ծավալը 100 խոշոր հարկատուների պարագայում,
- ✓ 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 378 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ էականորեն չի ավելացել,
- ✓ ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները կազմել են շուրջ 34,4 մլրդ դրամ՝ 2022-ի համեմատ 6,7 մլրդ դրամով ավելի,
- ✓ 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը

կազմել է 28 անգամ, ինչը նախորդ տարիների համեմատությամբ էականորեն ցածր է,

- ✓ 2023թ. արդյունքներով՝
  - ՀՀ-ում գործող 311 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2022-ին այդպիսի հարկատուների թիվը 258 էր, 2021-ին՝ 201, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ,
  - 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների թիվը 654 է (2022-ին՝ 543),
  - 1000 խոշոր հարկատուների ցանկում 200 մլն դրամից պակաս հարկ վճարած ընկերություններ չկան (2021-ին այդպիսիք 142-ն էին, 2020-ին՝ մոտ 200),
  - 200 ընկերության վճարած շահութահարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը (նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 160 էր, իսկ օրինակ 2020-ին՝ 116),
  - 304 հարկատու գերազանցել է եկամտային հարկի՝ 200 մլն դրամի շեմը (2022-ին՝ 280),
  - 1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 31,5%-ը ուղղակի հարկերն են ինչը ցածր է նախորդ մի քանի տարիների մակարդակից: 1000 հարկատուների պարագայում նույն ցուցանիշը 2023-ին 32,3% է, ինչը բարձր է 2022-ի մակարդակից (28,7%),
  - 200 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 470 ընկերություններ (2022-ին՝ 409, 2021-ին՝ 347):
- ✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023-ի արդյունքներով վճարել է 9,8 մլրդ դրամի հարկ (2022-ին՝ 8,8 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,6 մլրդ դրամ (2022-ին՝ 1,1 մլրդ դրամ), եկամտային հարկը՝ 1,48 մլրդ դրամ (2022-ին՝ մոտ 1,2 մլրդ դրամ), ԱԱՀ-ն՝ 4,0 մլրդ դրամ (2022-ին՝ 3,4 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 1,2 մլրդ դրամ (2022-ին՝ 0,97 մլրդ դրամ):
- ✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023թ. 12 ամիսների արդյունքներով վճարել է 344 մլն դրամի հարկ (2022-ին՝ 278 մլն դրամ), եկամտային հարկը՝ 79 մլն դրամ (2022-ին՝ 78 մլն դրամ), շահութահարկը՝ 40 մլն դրամ (նախորդ տարի՝ միջինում արձանագրվել է 20 մլն դրամի վնաս), ԱԱՀ-ն՝ 154 մլն դրամ (2022-ին՝ 123 մլն դրամ):
- ✓ Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 80%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ էապես չի փոխվել: Մինչդեռ նրանց

մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2023-ին կազմել է 82,1%, ինչը նկատելիորեն բարձր է նախորդ տարվա մակարդակից:

- ✓ Խոշոր հարկատուների առաջին հարյուրյակի ընկերությունների շուրջ 70%-ը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: Այսպես, նախորդ տարվա համեմատությամբ բացարձակ արտահայտությամբ առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում առաջատար են «ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»-ը՝ +28,5 մլրդ դրամ; «ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ»-ը՝ +25,7 մլրդ դրամ; «ՓՐԻԹԻ ՈՒԵՅ»-ը՝ + 24,8 մլրդ դրամ: Նույն տասնյակում ներկայացված են 4 բանկեր՝ Արդշինբանկ, Ամերիաբանկ, Էվոկաբանկ, ԱԿԲԱ բանկ, որոնց գումարային հարկային վճարումները 2023-ին կազմել են շուրջ 72 մլրդ դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ 47 մլրդ դրամով ավելի:
- ✓ ցանկի առաջին հարյուրյակում ներկայացված են ՀՀ 18 բանկերից 14-ը, որոնց գումարային հարկային վճարումները գերազանցել են 126 մլրդ դրամը, ինչը նախորդ տարվա համեմատ ավելի է շուրջ 70 մլրդ դրամով,
- ✓ Առաջին հարյուրյակի ընկերություններից 54-ը նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումները ավելացրել են առնվազն 1 մլրդ դրամով, իսկ 21 հարկատուի պարագայում արձանագրվել է վճարած հարկերի առնվազն կրկնապատկում:
- ✓ Ցանկի առաջին հարյուրյակի 11 ընկերություններ նախորդ տարվա համեմատությամ ավելի քան 1 մլրդ դրամով կրճատել են վճարած հարկերի ծավալը: Անկում արձանագրած հարկատուների շարքում առանձնանում են հատկապես ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ-ն՝ նվազումը 73 մլրդ դրամի չափով, ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ-ն՝ -16,1 մլրդ դրամ, ԹԵՂՈՒՏ-ը՝ -8 մլրդ դրամ:
- ✓ Հարկ է նշել, որ շինարարության աճը համահունչ չէ ոլորտի հարկ վճարողների կողմից գեներացված հարկային մուտքերին, քանի որ ոլորտը աճում է շատ ավելի բարձր տեմպով, քան հավաքագրումն է: